ԷՄՄԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.184

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ բանաստեղծ, մատենագիր, երաժիշտ-երգահան, գրիչ, նշանավոր հասարակական գործիչ, Ամենայն Հայոց հայրապետ Ներսես Շնորհալին թողել է գրական հարուստ ժառանգություն՝ արձակ (մեկնություններ, թղթեր, ճառեր) և չափածո (շարականներ, տաղեր, մեղեդիներ, գանձեր, ներբողներ, հանելուկներ, վիպերգական, վիպաքնարական բնույթի քերթվածներ ևն):

Ներսես Շնորհալու հանելուկներին հայ գրականագիտական միտքն անդրադարձել է առանձին գրքերի, գրական հոդվածների, գրախոսությունների, գիտաքննական վերլուծությունների միջոցով:

Իրական կյանքի պատկերները, հայ ժողովրդի կյանքն ու աստվածաշնչյան գաղափարներն են Շնորհալու հանելուկների հիմնական թեմաները, որոնց միջոցով պետք է կրթվեն և դաստիարակվեն հայ երեխաներն ու, ինչու ոչ, նաև հայ ազգը:

Ներսես Շնորհալու հանելուկները բարձր է գնահատել Կիրակոս Գանձակեցին: Նա նշում է. «Եվ քանի որ Ներսեսը ամեն բանի մեջ հանճարեղ էր, գրեց նաև խորիմաստ առակներ գրքերից ու հանելուկներ, որպեսզի սուտ զրույցների փոխարեն ասեն գինարբուքներում ու հարսանիքներում: Եվ ինքը՝ Աստծու այն արժանավոր մարդը, հեզ էր և ամեն բանով պարկեշտ» **(Կիրակոս Գ., 1982)**:

Ասատուր Մնացականյանը դասական հանելուկի ժանրի ամբողջական ձևավորումը և զարգացումը կապում է Ներսես Շնորհալու հետ՝ նշելով, որ

«Ներսես Շնորհալուց սկսած՝ գրավոր հանելուկների թեմաների սահմանները տեսականորեն այնքան են լայնանում, որ աստիճանաբար մոտենում են ժողովրդականին» **(Մնացականյան Ա.,1980)**:

Հանելուկներում լիովին բացահայտվում են Շնորհալու մանկավարժական հայացքները: Շնորհալին արել է հնարավորինս սովորողներին գիտելիքներ փոխանցելու համար, բայց դրանից զատ կարևորել է ոչ միայն գիտելիքը, այլ գիտելիքը տեղ հասցնելու ճանապարհն ու մեթոդները: Հանելուկների ստեղծումն ու կիրառումը վիթխարի առաջընթաց էր մանկավարժության մեջ, քանի որ այն դարձավ երեխաներին ոչ միայն գիտելիք տրամադրելու, այլև աշխարհաճանաչողության, սուր մտքի, դիտողականության, համառոտ նկարագրից կռահելու կարողությունները զարգացնելու կարևոր նախապայմանը:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Ներսես Շնորհալի, հանելուկ, պատմություն, հայրենիք, ազգային հերոս, ինքնություն, հոգևոր առաջնորդ, մանկավարժ, դպրոց, ուսուցում:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներսես Շնորհալին մեծագույն նորարար է: Եթե նախորդ շրջանում հանելուկ գրում էին ազատ ոտանավորով, տարբեր չափ ու կշռույթով, ապա Ներսես Շնորհալին ստեղծեց դրա դասական տիպը, որ այնուհետև դարձավ ընդօրինակման առարկա:

Հակոբ Մեղապարտը 1512-1513 թթ.-ին իր հրատարակած հայերեն անդրանիկ Տաղարանում առաջին անգամ զետեղում է Ներսես Շնորհալու հանելուկների մի ընդարձակ շարք՝ «Տեառն Ներսէսի հայոց կաթողիկոսի ասացեալ է Հանելուկս վասն ուրախութեան մարդկան» խորագրով **(Մնացականյան Ա., 1980)**:

Ինչպես իր մի շարք ուրիշ գործերում, այնպես էլ հանելուկների մշակման բնագավառում Շնորհալին հետևել է մեր հայրենասեր պատմիչներին լավագույն ավանդույթներին և ստեղծագործության առարկա դարձրել հայոց պատմության

մեջ նշանավոր անձանց՝ ժողովրդին հայրենասիրության ոգով դաստիարակելու նպատակով:

«Ազգի պատմական ճակատագիրն է այն գլխավոր առանցքը, որի շուրջ պտտվում են Շնորհալու լավագույն ստեղծագործությունները: Ժողովրդի քաղաքական կեցության հրատապ գրողն առնչվել է և՛ գործնականորեն՝ իբրև ժամանակի աչքի ընկնող եկեղեցական-քաղաքական գործիչ, նաև իբրև ստեղծագործող՝ ամենուրեք հանդես գալով որպես դարի առաջադեմ մտածողության արտահայտիչը: Ամենից առաջ հենց ազգի պատմական ճակատագրի մեծ մտահոգությունն է պայմանավորել նրա լավագույն քերթվածների քաղաքացիական պաթոսն ու հայրենասիրական հեռահար լիցքերը, որոնցով և պետք է բացատրել Շնորհալու ստեղծագործության ազդեցությունը հետագա դարերում»,-գրում է Չարպհանալեանը **(Չարպհանալեան Գ., 1897)**:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերջին ժամանակներս խորին հետաքրքրություն է ցուցաբերվում հանելուկի ժանրի, զարգացման առանձնահատկությունների, դրա միջոցով ազգային հերոսների վերաբերյալ պատկերացում կազմելու և արժեհամակարգ ստեղծելու վերաբերյալ: Նրա հանելուկները բազմիցս մեկնաբանվել է համեմատական, վերլուծական և գրաքննադատական դիտանկյուններից: Այս մեթոդով էլ շարադրված է սույն հոդվածը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Շնորհալու հանելուկներում ազգային հերոսները հանդես են գալիս որպես ազգային, պատմական և հոգևոր-բարոյական արժեքների կրողներ, որոնք արտացոլում են հայ ժողովրդի անցած ճանապարհը, անձնվեր պայքարը հանուն հայրենիքի և մարտական ոգին: Թեմայի ուսուցումը դպրոցում կարող է նպաստել աշակերտների հետաքրքրությունը ոչ միայն հայ գրականության, այլև սեփական ազգի պատմության հանդեպ, մղել պատմամշակութային վայրերի բացահայտմանը, խթանել պատմավիպասանության ընթերցանությանը, որը

կնպաստի թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի զարգացմանը, թե՛ աշխարհաճանաչողությանն ու մտահորիզոնի լայնացմանը:

Շնորհալու հանելուկներում հստակ ձևով տեսնում ենք ազգային հերոսների տարանջատումը՝

1. Պատմական հերոսներ.

հանելուկներում կարելի է հանդիպել կերպարներ, որոնք խորհրդանշում են ազգային պայքարը, ինքնության պահպանումը:

1. Հոգևոր առաջնորդներ.

Շնորհալին, լինելով կաթողիկոս, հանելուկներում ընդգրկում է աստվածաշնչյան կերպարների, որոնք հայոց հոգևոր ինքնության անբաժան մասն են կազմում:

Ասատուր Մնացականյանը ընդգծում է. «Ներսես Շնորհալու հանելուկների գաղափարական բովանդակության մասին խոսելիս չի կարելի չգնահատել այն ստեղծագործությունները, որոնք նվիրված են հայ ժողովրդի մեծ զավակներին» **(Մնացականյան Ա.,1980):**

Անդրադառնանք հանելուկներին՝ ասվածը փաստելով օրինակներով.

Տորք Անգեղ. Տորք Անգեղի կերպարը արտացոլված է Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» երկում: Տորքը Հայկ Նահապետի թոռ Պասքամի որդին է: Նա բարձրահասակ, բիրտ կազմվածքով, դժնի հայացքով, վիթխարի ուժի տեր հսկա է: Տորքը ձեռքով ապառաժներ է ճեղքել, եղունգներով տաշել, տախտակի նման հարթեցրել և դրանց վրա արծիվներ է քանդակել: Պոնտոսի (Սև ծով) ափին հարձակվել է թշնամու նավերի վրա, լեռներից ահռելի ժայռեր է պոկել ու նետել նրանց հետևից: Ծովում խիստ ալեկոծություն է բարձրացել, որի հետևանքով էլ բազմաթիվ նավեր են խորտակվել:

Տորք Անգեղի անվան մեջ զուգակցվել են երկու դիցանուններ՝ հողմն ու ամպրոպը մարմնավորող հին փոքրասիական Տարու, Տարքու, Տուրգու կամ Տրգա աստծու և հին հայոց Անգեղ աստծու անունները: Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ շումերաաքքադական Ներգալ

աստծու անունը փոխարինված է Անգեղով: Վերջինիս պաշտանմունքի վայրը, ըստ երևույթին, եղել է Մեծ Հայքի նշանավոր Անգեղտուն գավառը, որի կուսակալ է նշանակվել, ըստ Մովսես Խորենացու, Տորք Անգեղը, և սրանից էլ ծագել է իշխանական տոհմանունը՝ Անգեղ տուն: Տորքի «Անգեղեայ» մակդիրը Խորենացու ժամանակ ժողովրդական ստուգաբանությամբ ըմբռնվել է իբրև տգեղ, մինչդեռ այն նշանակում է Անգեղի սերունդ, Անգեղյան: Անգեղ-հրեշտակների տան մասին Սեբէոսն ասում է. «…Անգեղ Տուն, … զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին» **(Պատմություն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, 1913):**

Գեղարվեստական գրականության մեջ Տորք Անգեղի կերպարին անդրադարձել է Ղազարոս Աղայանը իր «Տորք Անգեղ և Հայկանուշ Գեղեցիկ» **(Աղայան Ղ., 1979**) պոեմում, ինչպես նաև «Հայրենի պատմություններ» մատենաշարով վերջերս լույս է տեսել «Տորք Անգեղ» առասպելը **(Մալխասյան Ա., 2023)**:

Տորքի կերպարի արտացոլանքը կա Շնորհալու հետևյալ հանելուկում **(Մնացականյան Ա.,1980)**:

Մանուկ մի կայր ի Հայք գովան,
Քան զՍամփսոն այլ յաղթական,
Վէմ մի վերոյց մեծ տրամական,
Ի ծովն ընկեց կանգնեաց (Մնացականյան Ա., 1980):

Տրդատ թագավոր. 301 թվականին քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակած հայոց Տրդատ Գ թագավորը իր օրինակով ցույց տվեց, թե ինչպես կարելի է սխալվելով և ապաշխարելով՝ գտնել դարձի ճանապարհը:

301 թվականին հայերն աշխարհում առաջինն էին, ովքեր քրիստոնեությունը հռչակեցին որպես պետական կրոն: Այդ գործում առաջնակարգ դեր են խաղացել Տրդատ Գ թագավորը, Աշխեն թագուհին և թագավորի քույր Խոսրովիդուխտ կույսը:

Տրդատը Հայոց Խոսրով Մեծ թագավորի որդին էր: 5-րդ դարի հայ պատմագրության համաձայն, երբ 287 թվականին Տրդատը հռոմեական զորքի օգնությամբ վերադառնում է Հայաստան վերագրավելու իր հոր գահը, ճանապարհին՝ Եկեղյաց գավառի Երիզա ավանում, գոհաբանական զոհեր է մատուցում Անահիտ չաստվածուհու մեհյանին: Իր զինակիցներից Գրիգորը, ով քրիստոնյա էր, հրաժարվում է զոհ մատուցել: Այդ ժամանակ Տրդատին հայտնի է դառնում նաև, որ նա իր հոր՝ Խոսրով Բ-ին սպանող Անակ իշխանի որդին է: Թե՛ մեկ, թե՛ մյուս «հանցանքների» համար Տրդատը հրամայում է նրան գցել Արտաշատի մոտ գտնվող ստորերկրյա բանտը, որը մահապատիժների համար էր: Բերենք համապատասխան հատվածը Ագաթանգեղոսի «Հայոց դարձի պատմություն»-ից.

«Այսչափ հարցերից ու տանջանքներից, գանահարություններից ու բանտերից, գելարաններից ու կախաղաններից, դառն նեղություններից և ամեն խոշտանգումներից հետո, որոնք նա մեծ համբերությամբ հանձն առավ տեր մեր Հիսուս Քրիստոսի անվան համար, երբ թագավորը այս էլ իմացավ, թե իսկապես դա որդին է Անակ Պարթևի, որն սպանել էր նրա հորը՝ Խոսրովին, հրաման տվեց կապել ոտքերը, ձեռքերն ու պարանոցը, և տարան նրան Այրարատ գավառը, հանձնեցին Արտաշատ քաղաքի բերդի դղյակը և իջեցրին ներքին վիրապը, որի խորությունից դուրս գալ անհնարին էր, որպեսզի իսկույն մեռներ: Այդ վիրապում նա մնաց տասներեք տարի: Իսկ թագավորը շարժվեց գնաց ձմեռանոց՝ Այրարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը՝ Հայոց աշխարհի արևելքում»:

Նույն թվականին Տրդատը երկու հրովարտակ է արձակում՝ առաջինով հրամայելով Հայաստանի մեջ գտնվող քրիստոնյաների ոտքերը, ձեռքերն ու պարանոցները կապած արքունիք բերել և նրանց ունեցվածքը բռնագրավել, իսկ երկրորդով՝ մահապատիժ է սահմանում քրիստոնյաներին թաքցնողների համար: Այս հրովարտակները ցույց են տալիս, թե որքան մեծ վտանգ էր իրենցից ներկայացնում քրիստոնեությունը՝ պետության և հեթանոսության համար:

Տրդատի կերպարին չէր կարող չանդրադառնալ Շնորհալին: Խաժ աչքերով այս հզոր թագավորի համբավը տարածվել էր ամենուր, և բոլորը նրան տեսնելիս ասում էին «վաշ».

Թագուոր մի կայր, աչուին էր խաժ,

Ժամ մի՝ ժանի ունէր ու բաշ.

Սինօռ ունէր ինչւի Մարաշ,

Ամէնքդ ասէք իւրեանն վա՜շ(Մնացականյան Ա., 1980):

Շնորհալու հանելուկում ներկայացվում է Տրդատը՝ որպես խաժակն թագավոր, ում երկրի սահմանները հասնում էին մինչև Մարաշ, և բոլորը հիացմունքով էին խոսում նրա մասին, իսկ հակաքրիստոնեական գործունեության և կերպարանափոխության մասին Շնորհալին չի հիշատակում: Սովորողը չի կարողանա գտնել այս հանելուկի պատասխանը, եթե ծանոթ չլինի Տրդատ թագավորի կյանքին և անցած ուղուն: Տրդատ թագավորը հիանալի օրինակ է յուրաքանչյուրիս համար գալու այն համոզմունքին, թե որքան էլ սխալվենք՝ դարձի գալու, անխոտոր ճանապարհին կանգնելու և Աստծուն մոտենալու համար երբեք ուշ չէ:

Իր ուժով ու քաջությամբ Տորքին շատ նման է **Արշակունի Վարազդատը**.

Մանուկ մի այլ՝ ի յայս նման,

Էր ի յազգէն Արշակունեան,

Հանչաք մանուկ էր ու իշխան՝

Ընդ Եփրատ վազեաց քայլ մի լման (Մնացականյան Ա., 1980):

Աշակերտներին անհրաժեշտ է ներկայացնել, թե ով է Վարազդատը:

Վարազդատն ամեհի ուժի տեր մարդ էր: Մասնակցել և հաղթել է 393-րդ օլիմպիական խաղերում՝ կռփամարտից (բռնցքամարտ) և իր անունը դրոշմվել է մարմարյա սալիկին: Մովսես Խորենացին այսպես է նկարագրում Վարազդատ արքային. «Այս Վարազդատը երիտասարդ է տարիքով, սրտոտ, հաղթահասակ, ուժեղ, լի արիության բոլոր գործերով, և շատ հզոր՝ նետաձգության մեջ: Շապուհից փախչելով՝ նա գնացել էր կայսեր մոտ և այնտեղ քաջ հանդիսացել:

Նախ Պիսայում, բռնցքամարտներին հաղթելով, հետո ելլեգացիների Արեգ քաղաքում կես օրում մի քանի առյուծ կոտորեց, որի համար օլիմպիական հանդեսի ըմբշամարտի խաղերում փառք վաստակեց և հարգանք: Իսկ այն քաջ և արիական գործերը, որ նա կատարեց Ղանկվարտների ազգի դեմ, համարձակվում եմ ասել, թե հավասար էին Սուրբ Տրդատի գործերին, որովհետև թշնամիների կողմից հինգ ախոյան հարձակվեց իր վրա, և նա մեկը մյուսի հետևից բոլորին սրով կոտորեց, և մի բերդի վրա դիմելով՝ բերդի պատվարի վրա տասնյոթ մարդու նետով զարնելով՝ իրար վրա ներքև գլորեց, ինչպես շուտ հասունացած թզերը՝ գլորվում էին սաստիկ մրրիկից» **(Մովսես Խորենացի, 2014)**:

Ֆիզիկական մեծ ուժի տեր հայրենասեր պատմական անձնավորությունների կողքին հայոց պատմության մեջ քիչ չեն և հոգեկան խոշոր ուժի տեր հայրենասեր մարդիկ ու գիտնականները: Այսպիսի մարդկանցից հանելուկի նյութ են դարձել Ներսես Մեծը, Դավիթ Անհաղթը և ուրիշներ:

Մի անտիպ հանելուկում **Ներսես**ը պատկերված է որպես հոգու պատվական տնտես, որը հոգեկան սնունդ է մատակարարում հայ ժողովրդին, իսկ երեխաներն առանձնապես այդ մտքի սննդով աճում և փարթամանում են**(Հակոբյան Գ., 1964)**.

Տնտես մի կայր խիստ պատուական,
Ճաշեր կազմէր յոյժ զանազան,
Մանկունքս ուտեն և զւարժանան,
Եւ գիտութեամբ փարթամանան (**Հակոբյան Գ., 1964)**

Այժմ փորձենք համառոտ ներկայացնել Ներսես Մեծին, որպեսզի սովորողը ոչ միայն մեխանիկորեն յուրացնի նյութը, այլև ունենա տեղեկատվություն որոշակի պատմական ժամանակաշրջանի, ինչպես նաև հայ ժողովրդի պատմության մեջ անմնացորդ նվիրում ունեցող անձանց շուրջ:

Փավստոս Բուզանդը Ներսես Մեծին բնութագրում է այսպես. «Աստծուց երկյուղող, ավանդապահ Նրա բոլոր պատվիրաններին, մարդասեր, սուրբ,

զգաստ, անաչառ, հաշտարար բարքով, խոնարհ, քաղցր ու աղքատասեր: Աստծո սիրո մեջ կատարյալ, ըստ պատվիրանի սիրում էր մերձավորին իր անձի պես, ու մանկուց է պատվիրանապահ եղել: Անձանձրույթ էր աղոթքի մեջ ու նախանձախնդիր Աստծո փառքի համար: Շատ էր սիրում աղքատներին ու տառապյալներին, հոգում էր նրանց համար, իր հանդերձներից ու կերակուրներից բաժին հանելով բոլորին: Օգնական էր տագնապածներին, վերակացու և պաշտպան զրկվածներին» **(Փավստոս Բուզանդ, 2022)**:

Ներսես Մեծը հոգ էր տանում, որպեսզի Հայոց Եկեղեցու պաշտոնյաները զինվեն գիտությամբ և աստվածային իմաստությամբ: Սուրբ հայրապետը հայտնի էր մեծ աղքատասիրությամբ. նա երբեք ճաշի կամ ընթրիքի չէր նստում առանց սեղանակից ունենալու աղքատներին և կույրերին, անդամալույծներին և ցավագարներին: Սիրում էր անձամբ սպասավորել և դարմանել նրանց:

Դավիթ Անհաղթ փիլիսոփային վերաբերող հանելուկի մեջ Շնորհալին դրել է հետևյալ նպատակները՝ ձգտում ու սեր դեպի գիտությունը և՝ մեծարումն ազգային անվանի գիտնականին, որի համբավը դուրս է եկել հայրենի երկրի սահմաններից և դարձել հայ ժողովրդի հպարտությունն ու պարծանքը**(Հակոբյան Գ., 1964)**.

Իմաստուն մի յԱթենաց
Էր ի յազգեն հայոց մեծաց,
Խոսրովային ճառ մի ասաց,
Որ չոր թուեաց վարդապետաց (**Հակոբյան Գ., 1964):**

Շարունակելով սովորողների մտահորիզոնը և ճանաչողության սահմանները ընդլայնել՝ ներկայացնենք Դավիթ Անհաղթի մասին: Դավիթ Անհաղթը ծնվել է V դ. 70-ական թվականներին, և մահացել է VI դ. կեսերին: Երիտասարդ տարիքում Դավիթ Անհաղթը մեկնել է Հունաստան՝ ուսումը շարունակելու նպատակով: Հաճախել է Օլիմպիոդորոս Կրտսերի փիլիսոփայական դպրոց: Նրա հայտնի երկերից են «Սահմանք իմաստասիրության» և «Պորփյուրի ներածության վերլուծությունը»: Նա սկզբից իր

երկերը գրել է հունարեն **(Արևշատյան Ս.,1980)**, ապա բնագիրը թարգմանվել է հայերեն:

Եկեղեցին, բարձր գնահատելով Դավիթ Անհաղթի գիտական պատկառազդու վաստակը, նրան դասել է սրբերի շարքը: Նրա աճյունը տեղափոխվել է հայրենի նահանգ և որպես սուրբ մասունք՝ մեծ շուքով հուղարկավորվել Մշո Առաքելոց վանքում:

Ներսես Շնորհալու հանելուկների մեջ իր ուրույն տեղն ունի **Մովսես Խորենացուն** վերաբերող հանելուկը՝ «Քերթողն» պատասխանով.

Սիրելի՛, աւտա՛, լըսէ՛.

Ի յայդ նըման մէկ մի այլ է,

Զերդ յորդահոս աղբիւր բըխէ

Ու ստոյգ ասէ զերդ մարգարէ(Մնացականյան Ա., 1980):

Հինգերորդ դարի նշանավոր պատմիչ, պատմահայր, քերթողահայր Մովսես Խորենացուն ծանոթ է յուրաքանչյուր հայ: Այս հանելուկի պատասխանը գտնելու համար առաջարկում ենք խաչաձև հարցումների միջոցով նախ պարզել, թե որքանով են սովորողները ծանոթ Խորենացուն, ինչ գիտեն նրա «Հայոց պատմության» վերաբերյալ, ապա լրացնենք նրանց գիտելիքների պաշարը:

Մովսես Խորենացին եղել է նշանավոր մատենագիր: Բանասերների պնդմամբ նրա թարգմանություններից է Ալեքսանդր Մակեդոնացու վարքը, այսինքն՝ կենսագրությունը:

Այս հանելուկը առաջին հայացքից թվում է, թե գրված է ազգային սնապարծության ոգով, բայց միայն թվում է: Երկար դարեր հայ ժողովուրդը, ինչպես և Արևելքի ու Արևմուտքի մյուս փոքր և ճնշված ժողովուրդներից շատերը, բազում անգամ արիաբար մարտնչել է արտաքին բռնակալ թշնամու դեմ՝ իր երկիրը և ինքնուրույնությունը պաշտպանելու համար և իսկապես տվել է բազմաթիվ քաջեր և անձնուրաց հերոսներ **(Հակոբյան Գ., 1964)**:

Ներսես Շնորհալին մանկավարժ

Շնորհալին մեծ մանկավարժ էր, ով կրթության մեջ կարևորում էր մեղմ,հեզաբարո վարքագիծը: Ըստ նրա կենսագրի՝ Ներսեսն աշակերտներին դիմում էր ոչ այլ կերպ, քան «լոյս» կոչելով նրան **(Ներսես Շնորհալի, 1977)**:

Շնորհալին արել է հնարավորինս սովորողներին գիտելիքներ փոխանցելու համար, բայց դրանից զատ կարևորել է ոչ միայն գիտելիքը, այլև գիտելիքը տեղ հասցնելու ճանապարհն ու մեթոդները: Հանելուկների ստեղծումն ու կիրառումը վիթխարի առաջընթաց էր մանկավարժության մեջ, քանի որ այն դարձավ երեխաներին ոչ միայն գիտելիք ուսուցանելու, այլև աշխարհաճանաչողության, սուր մտքի, դիտողականության, համառոտ նկարագրից կռահելու կարողությունները զարգացնելու կարևոր նախապայմանը:

Գրողը պատվիրում է առարկայի հատկանիշ, աշակերտը պետք է կռահի, պետք է մտովի այլ իրերի հետ զուգորդի, որպեսզի կարողանա գտնել հանելուկի պատասխանը: Տարվա եղնակներից գարնանը վերաբերող հանելուկը ամբողջությամբ միտված է սովորողների գեղարվեստական ճաշակի ձևավորմանն ու զարգացմանը:

Ներսես Շնորհալու հանելուկների ուսուցման մեթոդների մշակումը հայ գրականության ուսուցչի կարևոր պարտականություններից է, քանի որ այն դպրոցական դասագրքում գրեթե բացակայում է:

Դիտարկենք վերը նշվածը համապատասխան օրինակով:

Ներսես Շնորհալուն աշակերտները ծանոթանում են հանրակրթության իններորդ դասարանում՝ «Գրականություն» առարկայի շրջանակներում **(Գասպարյան Դ., 2023)**: Դասագրքում միայն մի չնչին հատված է հատկացված Շնորհալու հանելուկներին: Արդեն իսկ ակնհայտ է, որ Ներսես Շնորհալու հանելուկների ուսուցումը մնում է դասավանդող ուսուցչի բարեխղճությանը, քանի որ դասագիրքը սահմանափակում է աշակերտի միջնադարյան գրական շերտի ամբողջական ճանաչումը:

Ապրելով այնպիսի ժամանակաշրջանում, երբ կենաց-պայքար է մղվում ունեցածը պահպանելու համար՝ մենք մեր խորին դժգոհությունն ենք հայտնում

դասագրքում հանելուկները չընդգրկելու, աշակերտներին պարտադիր ամբողջական պատկերացում կազմելու չմղելու, ինչպես նաև ազգային արժեքները ճանաչելուն չնպաստելու հիմունքով կազմված դասագրքի վերոհիշյալ նյութի հանդեպ:

Այժմ ծանոթանանք այն սկզբունքներին և մոտեցումներին, որոնք մենք ենք առաջարկում հանրակրթության դպրոցում հանելուկների ուսուցումը կազմակերպելու համար:

Ներսես Շնորհալու հանելուկները դպրոցում կարելի է ուսուցանել՝ միավորելով ավանդական և նորարարական մեթոդները:

Ինչպես հասկացանք՝ Շնորհալու գրչից անմասն չմնացին նաև պատմական անձինք և պատմական դեմքերը: Հանելուկների միջոցով Շնորհալին ոչ միայն վերստին կենդանություն հաղորդեց պատմական անձանց, այլև դյուրին ճանապարհ հարթեց աշակերտների համար՝ հետաքրքիր, բայց միևնույն ժամանակ նաև խաղային միջոցով սովորելու դասանյութը: Կարող ենք ասել, որ այս առումով ևս Շնորհալին նորարար է:

Ստորև ներկայացնում ենք դասի պլան:

Դասի նպատակներ

- Ծանոթացնել աշակերտներին Ներսես Շնորհալու հանելուկների ժանրին և դրանցում պատկերված հերոսների ունեցած դերին հայ ժողովրդի պատմության մեջ:
- Խթանել ինքնուրույն մտածողությունն ու վերլուծությունը՝ օգտագործելով պատմական թեման պարունակող հանելուկներ:
- Ուղղորդել աշակերտներին ինքնուրույն բացահայտելու պատմական գործիչներին, ստեղծելով հետաքրքրություն՝ հայոց պատմության և հայ մշակույթի նկատմամբ:
- Զարգացնել աշակերտների լեզվամտածողությունն ու գեղարվեստական ճաշակը՝ մեկնաբանելով հանելուկներում ներկայացված պատկերները:

- Ներկայացնել հայ ազգային հերոսներին՝ օգտվելով այլ նյութերից:

Դասի կառուցվածք

1. Նախաբան (5 րոպե)

Դասագործընթացից մեկ կամ երկու օր առաջ ուսուցիչը ճանաչողական էքսկուրսիա է կազմակերպում՝ դիտելու «Վազգեն. Վերջին Սպարապետը» ֆիլմը, որի էմոցիոնալ դաշտը լիարժեք կարող է աշակերտներին ծանոթացնել համապատասխան թեմային: Դասի սկզբնական փուլում հարց ու պատասխանի միջոցով պարզում է, թե աշակերտները ինչ գիտեն Ներսես Շնորհալու մասին:

Ներածական հատվածից հետո անդրադառնում է հանելուկներին՝ շեշտը դնելով պատմական հանելուկների վրա: Ուսուցիչը տեսասահիկի միջոցով ցուցադրում է Հայաստան աշխարհի տարբեր ժամանակաշրջանների հերոսների լուսանկարները, ներկայացնում Ապրիլյան Քառօրյա և Արցախյան 44-օրյա պատերազմները՝ այդ կերպ փորձելով դասանյութը կապել աշակերտների ապրած ժամանակաշրջանի հետ:

2. Հիմնական նյութի ներկայացում (15 րոպե)

Ներկայացնում է Շնորհալու մի քանի հանելուկ, որոնք վերաբերում են ազգային հերոսներին: Աշակերտների ուշադրությունը սևեռում է այն փաստերի վրա, որոնք այս կամ այն կերպ առնչվում են պատմական որևէ գործողության հետ: Հանձնարարում է սովորողներին կարճ շարադրանքի միջոցով բնորոշել հերոսներին:

3. Գործնական աշխատանք (10 րոպե)

Աշակերտներին բաժանել խմբերի, յուրաքանչյուր խմբին տալ երկուական հանելուկ, ապա հանձնարարել համապատասխան գրքերից տեղեկություններ գտնել հանձնարարված հանելուկներում առկա կերպարների վերաբերյալ, ինչպես նաև նշել, թե ինչ կապ ունի այդ հանելուկը հայ ժողովրդի պատմության հետ:

4. Քննարկում և ամփոփում (10 րոպե)

Խմբերը ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը, կատարվում է ամփոփում, կարծիքների փոխանակում և գնահատում:

Ներսես Շնորհալու հանելուկների ուսուցումը կարող է դառնալ ոչ միայն գրականագիտական, այլև ազգային ինքնագիտակցության ձևավորման կարևոր միջոց ու ապահովել միջառարկայական կապ հայ ժողովրդի պատմության հետ: Դրանց միջոցով պետք է աշակերտներին բացատրել, որ թեև ժամանակը հոսել է, պատմական դեպքերը տեղի են ունեցել մեզնից դարեր առաջ, բայց դրանք միշտ պետք է լինեն մեզ ուղեցույց հասկանալու, թե ինչ է նշանակում լինել հայրենասեր և պայքարել ազատության համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շնորհալին, իր ժամանակից առաջ անցած, նորարար բանաստեղծ էր, որի վառ վկայությունն են նրա հանելուկները, որոնք գրականությունը կյանքին մոտեցնելու, աշխարհիկացնելու ամենացայտուն օրինակներն են:

Նա փոխեց մինչև անգամ բանաստեղծությունների լեզուն՝ այս կերպ ամբողջությամբ գրականությունը ժողովրդականացնելով: Նա սկսեց հանելուկները համեմել ռամկական բառ ու բանով:

Ներսես Շնորհալու հայոց պատմության թեման արծարծող հանելուկները հայ միջնադարյան գրականության լավագույն էջերից են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Արևշատյան Ս. (1980)**, Դավիթ Անհաղթը՝ հին Հայաստանի ականավոր փիլիսոփա, Երևան, «Հայաստան» հրատ.:
2. **Ագաթանգեղոս (2021)**, Հայոց դարձի պատմություն, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ.:
3. **Գասպարյան Դ. (2023)**, Գրականություն 9, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ.:
4. **Դոլուխանյան Ա. (2006)**, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ.:

5. **Դոլուխանյան Ա. (2006)**, Հայ գրականության պատմություն, Հին և միջնադարյան գրականություն, Երևան, «Զանգակ» հրատ.:
6. **Դոլուխանյան Ա. (2008)**, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, «Զանգակ» հրատ.:
7. **Կիրակոս Գանձակեցի (1982)**, Հայոց պատմություն, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
8. **Հակոբյան Գ. (1964)**, Ներսես Շնորհալի, Երևան,ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
9. **Մալխասյան Ա. (2023)**, Տորք Անգեղ, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ.:
10. **Մնացականյան Ա. (1980)**, Հայ միջնադարյան հանելուկներ (V — XVIII դդ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. :
11. **Մովսես Խորենացի (2014)**, Հայոց պատմություն, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ. :
12. **Ներսես Շնորհալի (1928)**, Հայոց կաթողիկոսի Բանք Չափաւ, Ի Վենետիկ, Ի Սուրբն Ղազար:
13. **Ներսես Շնորհալի (1977)**, Հոդվածների ժողովածու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
14. **Չարպհանալեան Գ. (1897**), Հայկական Հին դպրութեան պատմութիւն, 3-րդ տպագրութուն, Վենետիկ, Մխիթարեան տպարան:
15. **Փավստոս Բուզանդ (2022)**, Հայոց պատմություն, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ.:

REFERENCES

1. **Arevshatyan S. (1980)**, Davit' Anhaght'y՝ hin Hayastani akanavor p'ilisop'a /David the Invincible: An Outstanding Philosopher of Ancient Armenia/, Yerevan, "Hayastan" Publishing House.
2. **Agatangeghos (2021)**, Hayoc dard'i patmowt'yown /History of Armenian Conversion/, Yerevan, "Edit Print" Publishing House.

3. **Gasparyan D. (2023),** Grakanowt'yown 9 /Literature 9/, Yerevan, "Tigran the Great" Publishing House.
4. **Dolukhanyan A. (2006)**, Hay grakanowt'yan dasavandman met'odika /Methodology of Teaching Armenian Literature/, Yerevan, "Zangak" Publishing House.
5. **Dolukhanyan A. (2006)**, Hay grakanowt'yan patmowt'yown, Hin ev mijnadaryan grakanowt'yown /History of Armenian Literature, Ancient and Medieval Literature/, Yerevan, "Zangak" Publishing House.
6. **Dolukhanyan A. (2008)**, Hay jhoghovrdakan banahyowsowt'yown /Armenian Folklore/, Yerevan, "Zangak" Publishing House.
7. **Kirakos Gandzaketsi (1982)**, Hayoc patmowt'yown /Armenian History/, Yerevan, "Soviet Writer" Publishing House.
8. **Hakobyan G. (1964)**, Nerses Shnorhali /Nerses Shnorhali/, Yerevan, ASSR Academy of Sciences Publishing House.
9. **Malkhasyan A. (2023)**, Torq Angegh /Tork Angegh/, Yerevan, "Edit Print" Publishing House.
10. **Mnatsakanyan A. (1980)**, Hay mijnadaryan hanelowkner (V—XVIII dd.) /Armenian Medieval Riddles (V—XVIII centuries.)/, Yerevan, ASSR Academy of Sciences Publishing House.
11. **Movses Khorenatsi (2014)**, Hayoc patmowt'yown /History of Armenia/, Yerevan, “Edit Print” Publishing House.
12. **Nerses Shnorhali (1928)**, Hayoc kat'oghikosi Banq Chap'aw /The Bank of the Armenian Catholicos/, In Venice, In Saint Ghazar.
13. **Nerses Shnorhali (1977)**, Hodvac'neri jhoghovac'ow /Collection of Articles/, Yerevan, Armenian SSR Academy of Sciences Publishing House.
14. **Charphanalian G. (1897)**, Haykakan Hin dprowt'ean patmowt'iwn /History of the Armenian Old School/, 3rd edition, Venice, Mekhitarist Publishing House.

15. **Pavstos Buzand (2022)**, Hayoc patmowt'yown /History of Armenia/, Yerevan, “Edit Print” Publishing House.

Emma Simonyan

National Heroes in Nerses Shnorhali's Riddles and the Teaching of Their Characters in School

Conclusions

Key words and expressions: *Nerses Shnorhali, riddle, history, homeland, national hero, identity, spiritual leader, educator, school, teaching.*

Armenian poet, chronicler, musician-songwriter, writer, prominent public figure, Patriarch of All Armenians Nerses Shnorhali left a rich literary heritage: prose (essays, letters, speeches) and verse (sharakans, songs, melodies, treasures, incantations, riddles, epigrams of a novelistic, novelistic nature, etc.).

Armenian literary thought has addressed Nerses Shnorhali's riddles through separate books, literary articles, reviews, scientific analyses.

Real life images, the life of the Armenian people and biblical ideas are the main themes of Shnorhali's riddles, through which Armenian children and, why not, also the Armenian nation should be educated and brought up.

Nerses Shnorhali's riddles were highly appreciated by Kirakos Gandzaketsi. He notes: “And since Nerses was a genius in everything, he also wrote profound parables from books and riddles, so that instead of false conversations they would tell them at wine parties and weddings. And he himself, that worthy man of God, was meek and decent in everything” (Kirakos G., 1982).

Asatur Mnatsakanyan associates the complete formation and development of the classical riddle genre with Nerses Shnorhali, noting that “starting from Nerses

Shnorhali, the boundaries of the themes of written riddles theoretically expand so much that they gradually approach the folk ones" (Mnatsakanyan A., 1980).

Shnorhali's pedagogical views are fully revealed in the riddles. Shnorhali did his best to convey knowledge to students, but in addition to that, he attached importance not only to knowledge, but also to the way and methods of delivering knowledge. The creation and use of riddles was a huge breakthrough in pedagogy, as it became an important prerequisite for not only providing children with knowledge, but also for developing their worldview, sharp mind, observation, and the ability to guess from a brief description.

Эмма Симонян

Национальные герои в загадках Нерсеса Шнорали и преподавание их характеров в школе

Заключение

Ключевые слова и выражение: *Нерсес Шнорали, загадка, история, родина, национальный герой, личность, духовный лидер, педагог, школа, обучение.*

Армянский поэт, летописец, музыкант-песенник, писатель, видный общественный деятель, Патриарх всех армян Нерсес Шнорали оставил после себя богатое литературное наследие: прозу (очерки, письма, речи) и стихи (шараканы, песни, мелодии, клады, заклинания, загадки, эпические и лирические отрывки и т. д.).

Армянская литературная мысль обращалась к загадкам Нерсеса Шнорали посредством отдельных книг, литературных статей, рецензий и научных анализов.

Реальные образы, жизнь армянского народа и библейские идеи — вот основные темы загадок Шнорали, посредством которых следует воспитывать и обучать армянских детей, а почему бы и нет, армянскую нацию в целом.

Загадки Нерсеса Шнорали высоко ценил Киракос Гандзакеци. Он отмечает: «А так как Нерсес был гений во всем, то он и писал из книг глубокие притчи и загадки, чтобы вместо лживых разговоров рассказывать их на попойках и свадьбах. И сам он, этот достойный человек Божий, был кроток и порядочен во всем» (Киракос Г., 1982).

Асатур Мнацаканян связывает полное становление и развитие жанра классической загадки с Нерсесом Шнорали, отмечая, что «начиная с Нерсеса Шнорали, границы тематики письменных загадок теоретически расширяются настолько, что постепенно приближаются к народным» (Мнацаканян А., 1980). Педагогические взгляды Шнорали полностью раскрываются в загадках. Шнорали делал все возможное, чтобы передать знания своим ученикам, но, кроме того, он подчеркивал не только знания, но и способы и методы передачи этих знаний. Создание и использование загадок стало огромным прорывом в педагогике, поскольку стало важной предпосылкой не только для получения детьми знаний, но и для развития их мировоззрения, острого ума, наблюдательности, умения догадываться по краткому описанию.

ԷՄՄԱ ՍԻՄՈՆՅԱՆ - Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ: Աշխատում է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում: emmasimonyan9991@mail.ru

EMMA SIMONYAN - Applicant of the Chair of Armenian Ancient and Medieval Literature and its Teaching Methodology at Khachatur Abovyan Armenian State Pedagogical University. Works at the "Edit Print" publishing house. emmasimonyan9991@mail.ru

ЭММА СИМОНЯН - Соискатель кафедры армянской древней и средневековой литературы и методики ее преподавания Армянского

государственного педагогического университета имени Хачатура Абовяна. Работает в издательстве «Эдит Принт». emmasimonyan9991@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 30.03.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 18.04.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.